# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Յունվարի 1-ին, երկուշաբթի.- Գ. օր Ծննդեան պահոց: Կաղանդ, Տարեմուտ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գարեգին արքեպս. Բեգչյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Յունվարի 5-ին, շաբաթ. - Ճրագալոյց Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 69):

Ս. Պատարագից հետո ողջ միաբանությունն ու ուսանողությունը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողության ներքո շարժվեցին Վեհարան, որտեղ Տնօրհնեքի արարողությունը կատարելուց հետո, գնացին սեղանատուն՝ Տիրոջ Ծննդյան ավետիսը ցնծությամբ նշելու համար:

***Յունվարի 6-ին, կիրակի.- ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը Սուրբ Ծննդյան իր պատգամը ուղղեց հայ ժողովրդին (տե՛ս էջ 3):

Հընթացս Ս. Պատարագի Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ կատարվեց Ջրօրհնեքի արարողություն:

***Յունվարի 7-ին, կիրակի.- Բ. օր Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իգնատիոս աբեղա Մալխասյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ Սուրբ և անմահ Պատարագի կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ վասն համորեն ննջեցելոց:

*Հունվարի 13-ին, կիրակի.- Ը. օր Ծննդեան: Տօն անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշեն աբեղա Սանոսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Հունվարի 20-ին, կիրակի.- Ա. կիրակի զկնի Ծննդեան:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբեղա Նանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Հունվարի 27-ին, կիրակի.- Բ. կիրակի զկնի Ծննդեան:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Աշոտ աբեղա Մնացականյանը: Հընթացս Ս. Պատարագի Տ. Արշեն աբեղա Սանոսյանը կարդաց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը՝ նվիրված ՀՀ Ազգային բանակի 10-ամյակին (տե՛ս էջ 15):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: